ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

ՈՐՈՇՈՒՄ

Հայցադիմումը վարույթ ընդունելու, պատասխանողից ապացույցներ պահանջելու

և դատական ակտի հրապարակման օր նշանակելու մասին

ԵԴ2/11425/02/24 | ք. Երևան
9 Հունվարի 2025թ

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ն.Ավետիսյանս ծանոթանալով «ԱՆՆԱՐԿԱ» ՍՊ ընկերության ներկայացուցչի կողմից ներկայացված հայցադիմումին և կից փաստաթղթերին.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

«ԱՆՆԱՐԿԱ» ՍՊ ընկերության ներկայացուցչի կողմից հայցադիմում է ներկայացվել դատարան ընդդեմ «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության՝ «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության կարիքների համար համակարգչային տոմոգրաֆիկ համալիրի ձեռքբերման նպատակով ՍՄԿԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/8 ծածկագրով գնման ընթացակարգի էլեկտրոնային աճուրդի հրավերն

անվավեր ճանաչելու պահանջի մասին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Նույն մասի երկրորդ պարբերության համաձայն՝ նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

Ուսումնասիրելով ներկայացված հայցադիմումը, կից փաստաթղթերը, գտնում եմ, որ այն պետք է ընդունել վարույթ, քանի որ առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը:

Միաժամանակ, «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությունից պետք է պահանջել ՍՄԿԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/8 ծածկագրով գնման ընթացակարգի էլեկտրոնային աճուրդի հրավերի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 199-րդ հոդվածնով, Դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1.«ԱՆՆԱՐԿԱ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայցադիմումն ընդդեմ «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության՝ «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության կարիքների համար համակարգչային տոմոգրաֆիկ համալիրի ձեռքբերման նպատակով ՍՄԿԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/8 ծածկագրով գնման ընթացակարգի էլեկտրոնային աճուրդի հրավերն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ընդունել վարույթ:

2.«Կապանի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությունից պահանջել դատարան ներկայացնել ՍՄԿԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/8 ծածկագրով գնման ընթացակարգի էլեկտրոնային աճուրդի հրավերի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

3.Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության կողմից պետք է կատարվի սույն որոշումը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

4. Եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2025թվականի փետրվարի 18 -ին:

5. Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և բողոքարկման ենթակա չէ:

Դատավոր՝ Նաիրա Ավետիսյան Digitally signed by AVETISYAN NAIRA 7501660379
Date: 2025.01.09 11:05:34 AMT

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am